2022-2023 ուստարի
Տարրական դասարանների մ/մ Հաշվետվություն

GAREGINYAN TEREZA 7002670085 Digitally signed by GAREGINYAN TEREZA 7002670085

Մ/մ նախագահ՝ Արմինե Հայրապետյան

Տարրական դասարաններում 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում առաջնորդվել ենք պետական առարկայական ծրագրով և դրան համապատասխան կազմված թեմատիկ պլանով:

2-րդ,3-րդ և 4-րդ դասարաններում դասավանդումը կատարվել է միավորային:Ավարտել ենք էլ. մատյանների բնութագրիչների նշումը և 4-րդ դասարանի գիտելիքներիստուգումը:

Տարվա ընթացքում կատարվել են հետևյալ միջոցառումները

1. Գիտելիքի օր
2. Բաց դաս-միջոցառում 4-րդ դասարանում «Ոսկե աշուն» թեմայիամփոփում
3. Ամանորյա հանդես
4. Փոքրիկ միջոցառումներ նվիրված բանակի օրվան
5. Փոքրիկ միջոցառումներ նվիրված գիրք նվիրելու օրվան:
6. Մայրենիի օր՝ թեմատիկ զրույց
7. Բացիկների և ծաղիկների պատրաստում մայրիկների և տատիկների համարնվիրված ապրիլի 7-ին
8. 1-ին և 2-րդ դասարանները կազմակերպել են տարեվերջյան ամփոփիչ դաս-միջոցառում <<Հրաժեշտ այբբենարանին>>:
9. 1-ից 4-րդ դասարանները կազմակերպել են <<Ծաղիկների աշխարհում >>տարեվերջյան միջոցառումը:

Թեմատիկ պլանները, թեմատիկ գրավոր աշխատանքները համապատասխանել են չափորոշիչներին :

Տարրական դասարանների ուսուցիչները մասնակցել են պարտադիր հերթական ատեստավորմանը,ինչպես նաև 2-րդ դասարանի նոր ՀՊՉ-ի վերապատրաստմանը:

1-ից-4-րդ դասարանները մասնակցել են տարածաշրջանային սպորտլանդիայի և գրավել են 3-րդ տեղը:

Օգնություն է ցուցաբերվել սկսնակ դասվարին,տրվել է համապատասխան մեթոդական ուղղություն:
Յուրաքանչյուր ամիս անցկացվել է մ/մ նիստ,որտեղ քննարկվել են բոլոր հուզող հարցերը:
Ամբողջ տարվա ընթացքում կատարվել են դասալսումներ, բաց դասեր,դաս-միջոցառումներ և քննարկումներ:

1-ին և 2-րդ դասարանները երկկոմպլեկտ են՝ 4և 6 աշակերտներ:Դժվար է նրանց հետ աշխատելը,սակայն աշխատել ենք հասցնելով միջին մակարդակի:

Երաժշտություն առարկայից անց են կացվել ներկայացումներ «Ծունն ու կատուն», «Պապն ու շաղգամը »

3-րդ դասարանցիները ծանոթացել են ազգային նվագարաններին և ունկնդրել են տեսանյութեր:

Կերպարվեստ առարկայից 2-րդ և 3-րդ դասարանցիները գրել են սցենար իրենց նախընտրած թեմայով: Թեմային համապատասխան պլաստիլինից պատրաստել են տիկնիկներ և բեմադրել տիկնիկային թատրոն:

Ավարտեցինք 4-րդ դասարանիի գիտելիքների ստուգումը:Բացասական գնահատական չկար:Յուրաքանչյուր աշակերտ ստացավ իր տարեկանին համապատասխան գնահատական,շեղումները քիչ էին,կար մեկ ներառական աշակերտ,որը չմասնակցեց գիտելիքների ստուգմանը:Այդ աշակերտի համար կազմված է ԱՈՒՊ: Աշխատանքները տարվում են դրան համապատասխան:

Վերջին նիստում ամփոփեցինք ուստարին, տարվա աշխատանքը գնահատվեց բավարար,ուրվագծվեցին հաջորդ տարվա կատարվելիք աշխատանքները: